


ՊԱՅՔԱՐԵՆՔ ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐԻ ԴԵՍ



Օգտակար խորհուրդներ
փայտոջիլներով վարակների կանխման
և դրանց դեմ պայքարի համար

Ցանկացած տուն՝ շքեղ թե համեստ, մաքուր թե հակասանիտարական վիճակում, կարող է ապաստան լինել փայտոջիլների համար: Անհարմար զգալու կարիք չկա, եթե այդ միջատները թափանցել են ձեր բնակարան: Կարևորը արագ գործի անցնելն է՝ դրանց վերացնելու նպատակով:

Ի՞նչ է ՓԱՅՏՈՋԻԼԸ

- Հասուն փայտոջիլները խնձորի սերմի չափի և գույնի միջատներ են:
- Դրանք գիշերը խայթում են մարդկանց՝ նրանց արյունով սնվելու համար:
- Փայտոջիլների խայթոցների տեղերը նման են մոծակների խայթոցների տեղերին:

- Փայտոջիլները խուսափում են լույսից և սովորաբար թաքնվում են ննջարաններում՝ մահճակալի մոտ և ներքնակի կարերի երկայնքով:
- Փայտոջիլները չեն թռչում և չեն ցատկում մարդկանց վրա, այլ տեղափոխվում են քայլելով:

ԻՆՉՊԻՍԻ՞ ՎՏԱՆԳ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐԸ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- Փայտոջիլները հիվանդություններ չեն փոխանցում:
- Դրանց խայթոցը կարող է քոր առաջացնել:
- Խայթոցների տեղերը քորելուց կարող են առաջանալ մաշկի վարակումներ:
- Փայտոջիլները կարող են առաջացնել տարբեր խնդիրներ, օրինակ՝ քնի խանգարում, անհանգստության զգացում և մեկուսացում շրջապատից:



**ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ
ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐԻՆ**

Եթե փայտօջիլներ չեք տեսնում, փնտրեք հետևյալ նշանները

- Միջատների խայթոցների տեղեր՝ մոծակների խայթոցների տեղերի նման
- Քոր եկող մաշկ
- Սև կետեր ներքնակի կարերի վրա
- Արյան փոքր բծեր սավանների, ինչպես նաև ներքնակի կարերի վրա.

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ
ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐԸ**

- Շենքի մի բնակարանից մյուսն անցնելով
- Երբ մարդիկ դրանք տեղափոխում են տարբեր առարկաների միջոցով՝
- Ճամպրուկների, ձեռքի պայուսակների, հագուստի և այլն
- Կահույքի, հատկապես՝ ներքնակների և փափուկ (պաստառապատ) կահույքի, օրինակ, բազկաթոռների և բազմոցների:

**ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐՈՎ
ՎԱՐԱԿԸ**

Երբեք տուն մի՛ բերեք դրսում գտած ներքնակներ կամ կահույք, օրինակ, բազմոցներ, բազկաթոռներ, բազմոց-մահճակալներ կամ բամբակյա վատինե ներքնակներ, նույնիսկ եթե թվում է, թե դրանք լավ վիճակում են, քանի որ դրանցում կարող են լինել փայտօջիլներ:

Եթե տուն եք բերում գործածված հագուստ, ապա.

- Դրանք դրեք ցելոֆանե տոպրակի մեջ և տոպրակի բերանը ամուր փակեք՝ նախքան տուն բերելը:
- Տոպրակի պարունակությունը դատարկեք ուղղակի հագուստի չորացուցիչի մեջ և չորացուցիչը աշխատեցրեք ամենաբարձր պարամետրերով առնվազն 30 րոպե՝ սպանելու փայտօջիլներին և դրանց

ձվերը:

- Դատարկ տոպրակը նետեք դրսում դրված աղբարկղը:
- Եթե գնում եք գործածված կահույք, ապա.
- Ուշադիր զննեք և մաքրեք՝ նախքան ձեր շենք բերելը:
 - Խուսափեք գործածված ներքնակներ կամ գործածված փափուկ կահույք ձեռք բերելուց:

**ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏՎԵԼ ՎԱՐԱԿՎԱԾ
ՆԵՐՔՆԱԿՆԵՐԻՑ ԿԱՄ ԿԱՀՈՒՅՔԻՑ**

Եթե վերացնողը ձեզ խնդրում է դրանք դարձնել անօգտագործելի, ապա կտրատեք գործվածքը կամ ոչնչացրեք այդ իրերը: Ձեր բնակարանից դուրս հանելուց առաջ ներքնակները դրեք ցելոֆանե խոշոր պարկերի մեջ (անվճար պարկեր կարելի է ստանալ Accès-ի Մոնրեալի գրասենյակներից):

ՎԵՐԱՅՈՒՄ

Տանը փայտօջիլներ գտնելու դեպքում կենվորները պատասխանատու են իրենց տանտիրոջը անհապաղ հայտնելու համար:

**ՎԵՐԱՅՆՈՂԻ ՀԱՄԱՐ ՏՈՒՆԸ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ**

Վերացման հաջողությունն ապահովելու նպատակով կենվորները պետք է համագործակցեն իրենց տանտիրոջ հետ և ուշադրությամբ հետևեն վերացնողի ցուցումներին, օրինակ.

- Դատարկեք պահարանները և դարակները: Ամբողջ հագուստը, անկողնու սպիտակեղենը (սավաններ, ներքնակի երեսներ, վերմակներ, մահճակալի ծածկոցներ) և վարագույրները դրեք չորացուցիչի մեջ և չորացուցիչն աշխատեցրեք ամենաբարձր պարամետրերով առնվազն 30 րոպե՝ սպանելու

փայտոջիլներին և դրանց ձվերը:

- Ամբողջ հագուստը, անկողնու սպիտակեղենը և վարագույրները պահեք ամուր փակված ցելոֆանե տոպրակներում՝ մինչև վերացումն ավարտվի:
- Վերացրեք տան իրերի խառնաշփոթը՝ հեշտացնելու վերացնողի աշխատանքը:
- Փոշեկուլով մաքրեք տան բոլոր հատվածները, այդ թվում՝ կահույքի տակ, պատի պահարանների ներսը, շրիշակները (պլինթուսները) և այլն: Փոշեկուլի պարունակությունը դատարկեք ցելոֆանե տոպրակի մեջ, տոպրակն ամուր փակեք և նետեք դրսում դրված աղբարկղը:
- Նախքան ներքնակներից և փափուկ կահույքից ազատվելը ստուգեք վերացնողի հետ: Եթե դրանք լավ վիճակում են, ապա կարելի է մշակել:
- Նոր կահույք մի՛ բերեք տուն, քանի դեռ վերացումը լիովին չի ավարտվել:

Փայտոջիլների վերացումը հաջողությամբ ապահովելու համար հիմնական նախապայման է կենվորի, տանտիրոջ և վերացնողի համագործակցությունը:

ԿԵՆՎՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կենվորը պարտավոր է.

- Փայտոջիլներ նկատելուց հետո անհապաղ կանչել տանտիրոջը կամ շենքի կառավարչին:
- Եթե տանտերը գործողություններ չի ձեռնարկում, կապվել վարչական շրջանի Թույլտվությունների և ստուգումների բաժնի (Division des permis et des inspections) ներկայացուցչի հետ՝ զանգահարելով 311:
- Վերացնողին թույլ տալ մուտք գործել տան բոլոր սենյակները:
- Տունը պահել մաքուր և հավաք (խառնաշփոթից զերծ) վիճակում:
- Հետևել վերացնողի խորհուրդներին:

Նախագուշացում: Մի՛ փորձեք ինքներդ լուծել խնդիրը: Մի՛ օգտագործեք միջատասպան միջոցներ կամ առանց դեղատոմսի վաճառվող այլ միջոցներ. դրանք կարող են վնասել ձեր առողջությանը և ավելի դժվարացնել փայտոջիլների վերացումը:

ՏԱՆՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Փայտոջիլների մասին տեղեկացվելուց հետո տանտերը պարտավոր է.

- Ձեռնարկել խնդրի լուծման գործողություններ:
- Վարձել վերացնողի՝ շենքի բոլոր փայտոջիլներին լիովին վերացնելու նպատակով:
- Վերացնողին հնարավորություն ընձեռել այցելելու բոլոր ընդհանուր տարածքները, բոլոր բնակարանները, որոնք կից են այն բնակարանին, որտեղ գտնվել են փայտոջիլներ, և, եթե վերացնողը անհրաժեշտ է համարում, ցանկացած այլ բնակարան՝ ամբողջ շենքում խնդիրը վերացնելու նպատակով:

ՎԵՐԱՑՆՈՂԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վերացնողը պարտավոր է.

- Գործադրել ամեն ջանք՝ բնակարանի բոլոր սենյակներում և բոլոր կից բնակարաններում, և, եթե անհրաժեշտ է համարում, ցանկացած այլ բնակարանում փայտոջիլներ հայտնաբերելու համար:
- Ապահովել, որ փայտոջիլները ոչնչացվեն զարգացման բոլոր փուլերում: Սրա համար պահանջվում է, որ վերացնողը սկզբնական մշակումից հետո վերադառնա առնվազն մեկ անգամ՝ ստուգելու, թե բոլոր փայտոջիլները ոչնչացվա՞ծ են:
- Խուսափել միջատասպան միջոցների

անհարկի օգտագործումից:
Ներքնակները և փափուկ կահույքը
սովորաբար կարելի է մշակել տաք
գոլորշիով:

- Ունենալ թույլտվություն Կայուն
զարգացման, շրջակա միջավայրի
և կլիմայի փոփոխության դեմ
պայքարի նախարարությունից
(Ministère du Développement durable, de
l'Environnement et de la Lutte contre les
changements climatiques) և աշխատանքը
հանձնարարել արտոնագրված
(սերտիֆիկացված) տեխնիկներին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

այցելել
lespunaisesdelit.info
avoidbedbugs.info

կամ զանգահարել 311

Պատրաստել են Մոնրեալ քաղաքը
(Ville de Montréal) (ville.montreal.qc.ca),
Մոնրեալի առողջապահության
և սոցիալական ծառայությունների
գործակալության (Agence de la santé et
des services sociaux de Montréal)
(santemontreal.qc.ca) Հանրային
առողջապահության վարչությունը
(Direction de santé publique) և
Բնակարանային և կոմունալ
ծառայությունների գրասենյակը
(Office municipal d'habitation de Montréal)
(omhm.qc.ca).